

# ՅԵՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԳՈՐԾԱԴԻՐ — ՄՆԱՅՈՒՆ ՅԱՆՉՆԱԺՈՂՈՎՈՅՑ

ԿՏԱԿԻՆ ՅՈՎՍԵՓԱՑ ԻԶՄԻՔԵՍՆՑ

Մահակ—Մեսրոպեան Գրական Մրցանակաբաշխութիւնն որ բարեյիշատակ Յովսէփ Խղմբեանցի կողմէ հաստատուած է, պիտի կատարուի յառաջիկայ 1890 տարւոյ, Յունիսի 21 ին, Արքոց Թարգմանչաց տօնի օրն, յԱզգային Պատրիարքարանի: Հետևապէս Գործադիր—Մնայուն Յանձնաժողովս կը փութայ այսու Յայտարարութեամբ վերստին հրաւիրել այն հեղինակներն ու բանասէրներն որ ունին ազգային լեզուաքննութեան և պատմութեան վերաբերեալ երկասիրութիւններ, ձեռագիր կամ տպագիր, և կը փափագին մասնակցիլ մըրցանակաբաշխութեան, փութան յուղարկել զայնս առ Ամեն. Արբազան Պատրիարք Հայրն, ի Ա. Պօլիս, Մինչև յառաջիկայ 15 Մարտ 1890 տարւոյ:

Տպագիր երկասիրութիւնք հարկ է որ երեք օրինակ յուղարկուին, և ձեռագիր մէկ օրինակ, որը ետ չեն տրուիր:

Համար 81

14<sup>16</sup> Նոյեմբեր 1889.  
ի Պատրիարքարանի Հայոց

Կ. Պօլիս.